'ի հողոյ ասեի 'ի Հռոմ, և ետ լինուլ զայն մերձ 'ի լեառն Վատիկան, և այն կոչեցաւ գերեզմանատուն. և 'ի միջոցի 24 ժամու 'ի հող լուծանել զմարմինն, թողով միայն զոսկերան։ Տես բառդ Charnel 'ի բառարանն Անգղիերէն և Գաղղիերէն, որք ցուցանեն գերեզմանք, ուր թաղեալ են մարմինք։ Ուստի 'ի ժամանակս Խաչակրաց տեղիս այս առ հասարակ կոչէր Charnel. քանզի երկրացի Արաբացիք և Քրիստոնեայք իսկ մինչեւ ցայսօր կոչեն զտեղին զայն Շուռնեն. յորմէ և 'ի մեզ ածանցեալ է Ջառներ եւ Ջամ Ճառներ։

Սակայն գերեզմանն Բրտի կամ Ակեղբամայ, է 'ի հիւսիսակողմն ձորոյն Գեհոնի. եւ է ցարդ 'ի ձեռս Հրէից. իսկ Ճառներն Հայոց՝ է 'ի կողմն հարաւոյ յայնկոյս ձորոյն, և 'ի հրովարտակս կոչի տեղին Ալոյ Թուռ, որպէս գրեցաք յառաջագոյն, և է ցարդ 'ի ձեռս Հայոց, իսկ օտարազգի տեղապրութիւնն թողումք ինքեան։

Ի ժամանակս բարեյիշատակ Գրիգորի Պատրիարքի գըտանէին 'ի վանս Ս. Յակոբայ արք բարեպաշտօնք և երկիւղածք յԱստուծոյ, վաստակաւորք և 'ի սրտէ ցանկացողք պայծառութեան Աթոռոյն և 'ի զարգացումն ազգին՝ որպիսի ոք էին Գրիգոր Մերենց, որոյ ձեռագիր Այսմաւուրն, գրեալ 1638 յամին. հրամանաւ Գրիգորի Պատրիարքի, կայ Ճեայ 'ի գրատան Ս. Աթոռոյս։ Եւ մահտեսի Ամիր Ազիզ՝ այր կրօնասէր, զորմէ ունիմք սակաւ ինչ գըրել 'ի ստորեւ՝ հանեալ 'ի յիշատակարանէ ձեռագիր մատենի։

Մահտեսի Ամիր Ազիզ 'ի յԱղցնեայ երկրէ 'ի Բգնունեայց վիճակէ (Բաղէշ) Ցորնել գեղջէ, որդի Սիմէոնի և եղբայր Միքայէլի Եպիսկոպոսի, 'ի մանկական տիոյն անարգեալ զփառս աշխարհի, և բարձեալ զխաչն Յիսուսի հետեւելով բանին կենաց՝ չրջելով 'ի Ս. Ուխտս և 'ի վանօրայս, աղօթելով եւ սրբութեանց սպասաւորելով սակս յուսոյ արքայութեանն. որ և ժամանեալ եհաս մինչեւ յայլսարհն լատինացւոց յԱռաքելական գահն 'ի մեծն Հռոմ. և դարձեալ կոխելով 'ի վերայ կոհակացն Ովկիանու՝ գայ յԱստուածակոխ քաղաքն Երուսաղէմ, վասն ուխտի Աստուածահոտ Տնօրինականացն Քրիստոսի. զորոյ տեսեալ զնորին